

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



Տեղեկանք

«Սասնա Ծռեր» խմբավորման կողմից ՀՀ Ոստիկանության
պարեկապահակետային ծառայության (ՊՊԾ) գնդի գրավումից
հետո 2016թ. հուլիսի 17-27-ը ՀՀ-ում ոստիկանության
գործողությունների վերաբերյալ

Վանաձոր 2016թ.

2016թ. հուլիսի 17-ին «Հիմնադիր խորհրդարանի» փոխնախագահ Վարուժան Ավետիսյանն իր ֆեյսբուքյան էջում տարածել էր [հայտարարություն](#), որով տեղեկացնում էր, որ «Մասնա Ծոեր» խմբավորման անդամները գրավել են Երևան քաղաքում գտնվող հիմնական ոստիկանական բազաներից մեկը: Այդ հայտարարությամբ ազդարարվում էր զինված ապաստամբության սկիզբը: Խմբավորման պահանջներն էին՝ ազատ արձակել «Հիմնադիր խորհրդարանի» համակարգող Ժիրայր Սեֆիլյանին և մյուս քաղաքական բանտարկյալներին, Սերժ Սարգսյանի հրաժարականը և իշխանության փոխանցումը ժողովրդի վստահության կառավարությանը:

Նույն օրը ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը ևս տարածել է [հայտարարություն](#) այն մասին, որ 2016թ. հուլիսի 17-ին զինված խումբը գրավել է ՀՀ Ոստիկանության պարեկապահակետային ծառայության գունդը և պատանդ վերցրել ոստիկանների:

2016թ. հուլիսի 17-ին՝ ՊՊԾ գնդի գրավման ընթացքում, հրազենային վնասվածքի պատճառով մահացել է գնդապետ Արթուր Վանոյանը: Հրազենային վնասվածքներ են ստացել նաև 3-4 ոստիկան, ինչպես նաև «Մասնա ծոեր» խմբի անդամ Թաթուլ Թամրազյանը և Սմբատ Բարսեղյանը: Թաթուլ Թամրազյանը տեղափոխվել է հիվանդանոց, իսկ Սմբատ Բարսեղյանը դեռևս գտնվում է ՊՊԾ գնդի տարածքում:

Բանակցությունների և «Մասնա ծոեր» խմբի բարի կամքի դրսևորման արդյունքում պանտանդ վերցված բոլոր ոստիկանները ազատ են արձակվել մինչև հուլիսի 23-ը:

Հուլիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրաձգության հետևանքով հրազենային վնասվածքներ են ստացել «Մասնա Ծոեր» խմբավորման անդամներ Աշոտ Պետրոսյանն ու Հովհաննես Հարությունյանը, որոնք նույն օրը տեղափոխվել են հիվանդանոց:

Հուլիսի 26-ի լույս 27-ի գիշերը հրաձգության հետևանքով հրազենային վնասվածքներով հիվանդանոց են տեղափոխվել «Մասնա Ծոեր» խմբավորման անդամներ Պավել Մանուկյանը, Արամ Մանուկյանը: Նույն օրը հրազենային վնասվածք է ստացել նաև մեկ ոստիկան և խմբավորման անդամ Գևորգ Իրիցյանը, որը մնացել է ՊՊԾ գնդի տարածքում:

Այս իրադարձությունը ուղեկցվել է ՀՀ Ոստիկանության կողմից ՀՀ քաղաքացիների նկատմամբ աննախադեպ բռնությունների կիրառմամբ, անհիմն և անօրինական ձերբակալություններով, քաղաքացիների բնակարաններում անօրինական խուզարկություններ իրականացնելով և քաղաքացիներին փողոցից առևանգելով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հավաքագրել է 2016 թ. հուլիսի 17-ից 27-ը բերման ենթարկված անձանց վերաբերյալ տվյալները՝ հիմք ընդունելով զանգվածային լրատվամիջոցներով եւ պաշտոնական աղբյուրներով տարածված, ինչպես նաև բերման ենթարկվածների և իրենց հարազատների ու ընկերների կողմից տրամադրված տեղեկությունները:

Ոստիկանության կողմից 2016թ. հուլիսի 17-27-ն ընկած ժամանակահատվածում, ըստ պաշտոնական տվյալների, բերման է ենթարկվել 202 քաղաքացի, իսկ համաձայն զանգվածային լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության և ականատեսների՝ ավելի քան 500 քաղաքացի:

2016թ. հուլիսի 17-27 բերման ենթարկված քաղաքացիների թիվը		
Ամիս, ամսաթիվ	Բերման ենթարկված անձանց թիվը ըստ պաշտոնական տվյալների	Բերման ենթարկված անձանց թիվը ըստ ՁԼՄ-ների և իրավապաշտպանների
17.07.2016	-	200-ից ավելի անձ ¹ (ըստ իրավապաշտպանների գնահատականի)
18.07.2016	-	30-ից ավելի անձ (ՁԼՄ-ներով հրապարակված դեպքերի հիման վրա)
19.07.2016	-	-
20.07.2016	-	5
հուլիսի 20-ի լույս 21-ի գիշեր 2016թ.	136 ²	շուրջ 300 անձ պահվել է Ոստիկանության ներքին գործերի գործառնամասում ³ (ականատեսի հավաստմամբ)
21.07.2016	-	-
22.07.2016	-	4 (ՁԼՄ-ներով հրապարակված դեպքերի հիման վրա)
24.07.2016	-	5 (ՁԼՄ-ներով հրապարակված դեպքերի հիման վրա)

¹ Տես՝ «Բերման ենթարկվածների թիվն անցնում է 200-ից»: Հասանելի է՝ <http://armtimes.com/hy/read/89781>

² Տես՝ «ՀՀ Ոստիկանության 21.07.2016 թ. պարզաբանումը»: Հասանելի է՝ <http://www.police.am/news/view/պարզաբանում210716.html>

³ Տես՝ «Ինչպե՞ս են վերաբերվել բերման ենթարկվածների հետ Արգավանդի գործառնամասում»: Հասանելի է՝ <http://www.aravot.am/2016/07/21/718195/>

27.07.2016	66 ⁴	100-ից ավելի անձ (ԶԼՄ-ներով հրապարակված դեպքերի հիման վրա)
Ընդամենը	202	500-ից ավել

Գրանցվել են ակտիվիստների, «Սասնա Շռեր» խմբավորման ներկայացուցիչների, «Հիմնադիր խորհրդարանի» անդամների և համակիրների, ինչպես նաև քաղաքական բանտարկյաների ընտանիքների անդամների նկատմամբ հետապնդումների և ճնշումների դեպքեր: Մի շարք քաղաքացիների բնակարաններում և ավտոտնակներում իրականացվել են անօրինական, առանց համապատասխան թույլտվության, խուզարկություններ:

Մի շարք քաղաքացիներ ուժով [բերման են ենթարկվել փողոցներից՝ առանց որևէ բացատրության](#):

Բերման ենթարկելու գործընթացը ուղեկցվել է քաղաքացիների նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող և առանձնապես դաժան վերաբերմունքով: Մի խումբ ակտիվիստներ ծեծի են ենթարկվել, ստացել են մարմնական վնասվածքներ ինչպես բերման ենթարկելու ընթացքում, այնպես էլ՝ հարցաքննությունների ժամանակ և ոստիկանական ավտոմեքենաներում:

[Հուլիսի 17-ին](#), [18-ին](#), [21-ին](#) և [24-ին](#) ոստիկանների կողմից բռնության են ենթարկվել նաև Խորենացի փողոցում իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնող մի շարք [լրագրողներ](#):

Բերման ենթարկվածները, օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի ժամանակի խախտմամբ՝ ընդհուպ մինչև 30 ժամ, պահվել են անազատության մեջ՝ առանց սննդի և ջրի:

Բացի ֆիզիկական բռնություններից՝ բերման ենթարկված քաղաքացիները ենթարկվել են նաև հոգեբանական ճնշումների. հուլիսի 18-ին բերման ենթարկված ցուցարարներից երկուսը հայտնել են, որ [նոստիկանները դաժան ծեծի են ենթարկել իրենց, հարկադրել են համբուրել իրենց կռիկները, հայիռել ու թքել են իրենց վրա](#):

Գրանցվել են նաև դեպքեր, երբ ոստիկանությունը ակտիվիստներին սպառնացել է նաև հեռախոսազանգերի միջոցով՝ հորդորելով չցուցաբերել քաղաքական ակտիվություն և չմասնակցել ցույցերին:

⁴ Տես՝ «Ոստիկանության կողմից հուլիսի 27-ին բերման է ենթարկվել 66 անձ»: Հասանելի է՝ <https://armenpress.am/arm/news/855469/hulisi-27-in-ostikanuty-an-koxmic-berman-e-entarkvel-66.html>

Հուլիսի 19-ին Վանաձորի Հայքի հրապարակում տեղի ունեցած հանրային քննարկման մասնակիցների նկատմամբ հետապնդումներ են սկսվել քաղաքացիական հագուստով ոստիկանների կողմից: Հիմնադիր խորհրդարանի ներկայացուցչի պնդմամբ՝ հետապնդումներ են իրականացվում մասնավորապես, այն անձանց նկատմամբ, ովքեր հուլիսի 17-ին, տարվել են Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:

Այս օրերին ոստիկանության կողմից կիրառվել է արատավոր պրակտիկա դարձած մեթոդը՝ քաղաքացիական հագուստով ոստիկան-սադրիչների կողմից խաղաղ ցուցարարների և ոստիկանության միջև բախումներ հրահրելը: Մասնավորապես՝ հուլիսի 21-ին՝ ժամը 02:30-ի դրությամբ, Խորենացի փողոցում տեղի ունեցած բախումների հետևանքով մայրաքաղաքի տարբեր բուժհաստատություններ դիմած անձանց թիվը կազմել է 51 անձ, որոնցից 28-ը՝ ոստիկան:

Հատկանշական է, որ ոստիկանությունը թույլ չի տվել բաժիններ այցելած փաստաբաններին ներս մտնել՝ բերման ենթարկվածներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով:

Հուլիսի 19-ին բախում է տեղի ունեցել ոստիկանության և Սարի թաղ կոչվող թաղամասի մի խումբ բնակիչների միջև, որոնք, [համաձայն լրատվամիջոցների](#), փորձել են միանալ «Մասնա ծոեր» խմբավորմանը:

Հուլիսի 17-20-ն ընկած ժամանակահատվածում ՄԻՊ թեժ գծով ստացվել է շուրջ 8 տասնյակ ահազանգ, որից մոտ 60-ը վերաբերել է բերման ենթարկելուն, մնացած 20 ահազանգով քաղաքացիները հայտնել են նաև բռնությունների մասին: Հուլիսի 20-ին ու 21-ին ՀՀ Ոստիկանության պատրաստած նյութերի հիման վրա Երևանի քննչական վարչությունում քրեական գործեր են հարուցվել քաղաքացիների կողմից ոստիկանների նկատմամբ բռնություն կիրառելու (ՔՕ 316-րդ հոդվածի 2-րդ մաս), զանգվածային անկարգություններ կատարելու (ՔՕ 225-րդ հոդվածի 2-րդ մաս) հատկանիշներով: Կազմվել է քննչական-օպերատիվ խումբ: Ոստիկանության 6 ծառայող ճանաչվել է տուժող և հարցաքննվել է⁵:

⁵ Տե՛ս Ոստիկանները ճանաչվում են որպես տուժող, քաղաքացիները՝ ոչ: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69329/ostikannery-tchanachvum-en-orpes-tuzhox-qaxaqacinery-och.html>

